

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

1995-ի Սեպտեմբերի 1-ին, Երևանի Պետական Համալսարանի Բանասիրականի շենքին մէկ անկիւնը սկսան դասաւանդութիւնները նոր ֆակուլտետի մը՝ Աստուածաբանութեան ֆակուլտետի: 1996-ի Յուլիսի վերջաւորութեան, Պետական Համալսարանի հնագոյն շենքին մէջ, աւարտեցան երկրորդ կիսամեակի բնութիւնները: Անցեալ տարուան Սեպտեմբերի 16-ին կատարուեցաւ բացման հանդիսաւոր արարողութիւնը Համալսարանի հին սեւ պազալտէ կառուցուած պատկառելի շենքին մէջ:

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Սովետ Միութեան նախկին հանրապետութիւններու բոլոր համալսարաններուն մէջ, միակն է Երևանի Պետական Համալսարանը, որ առաւ Աստուածաբանութեան նման ֆակուլտետ հիմնելու մեծ այս բայլը, համալսարանի գիտ-խորհուրդի որոշումով և պետական վաւերացումով:

Հանդիսաւոր բացման օրը, 1995 թ. Սեպտեմբերի 16-ին, ի ներկայութեան ԵՊՀ ռեկտոր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի, ԵՊՀ պրոռեկտորներուն, ՀՀ ԳԱԱ նախագահութեան անդամներուն, Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէնին, Աստուածաբանութեան ֆակուլտետի ղեկան Շահէ Արք. Անէմեանին, Համալսարանի բոլոր ֆակուլտետներու ղեկաններուն, փրոֆեսորադասախօսական կազմին, հանդիսութեանը մասնակցող ՀՀ փոխնախագահ և Հայաստանի քրիստոնէութեան պետականացման 1700-ամեակին նուիրուած պետական Հանձնաժողովի նախագահ պրն. Գ. Հարութիւնեանին, ՀՀ ԱԺ նախագահ պրն. Բ. Արարեցեանին, գլխաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ողջոյնի իր խօսքին մէջ, ՀՀ փոխնախագահ Գ. Հարութիւնեանը ըսաւ.

«Մա շատ խորհրդավոր իրողություն է, որ Պետական Համալսարանը իր պատմական շենքն է վերադառնում Աստվածաբանության ֆակուլտետով: Մենք երբ քննարկում էինք 1700-ամյակի նախնական ծրագրերը և ծրագրային աշխատանքների նախապատրաստումը, Համալսարանի ղեկավարության կողմից եղած այս առաջարկությունը քննարկեցինք Վազգեն Վեհափառի հետ, քննարկեցինք այնուհետև մորթնտիր Գարեգին Վեհափառի հետ, և մեծ ոգևորություն առաջացրեց, որ Հայաստանում ստեղծվում է ման հոգևոր մշակութային այս օջախը, որը, գիտա-ուսումնական լուրջ կենտրոն լինելով հանդերձ, միաժամանակ մեր հոգևոր վերածննդի ավետարաններից է լինելու»:

Համալսարանի միւս ֆակուլտետներու ծրագիրներուն նման, Աստուածաբանականը ևս կազմեց ուսման իր ծրագիրը, տարածուած քակլալիրատի չորս տարիներու և մաֆիստոսութեան երկու տարիներու վրայ, նպատակ ունենալով պատրաստել կրօնագիտութեան ուսուցիչներ, որոնք պիտի դասաւանդեն բարձրագոյն վարժարաններուն մէջ:

Նորարաց Ֆակուլտետը ունեցաւ երկու ամպիոններ՝ Կրօնական Գիտութիւններու ամպիոն՝ գլխաւորութեամբ Տոքթ. Գրոֆ. Հրանդ Յակոբեանի, և Աստուածաբանութեան ամպիոն՝ գլխաւորութեամբ Տոքթ. Գրոֆ. Շահէ Արքեպիսկոպոս Անէմեանի: Անցնող երկու կիսամեակներու ընթացքին զոյգ ամպիոնները գործեցին թափսնդիր կանոնաւորութեամբ և իրագործեցին իրենց ուսումնական ծրագիրները լուրջ կարգապահութեամբ: Քննութիւններու արդիւնքները արդարացուցին դասախօսական կազմին նուիրուած աշխատուէր և պարտանանշութիւնը:

Առաջին տարուան դասընթացներուն հետևեցան 25 ուսանողներ, որոնցէն 16-ը երկրորդական վարժարան աւարտած աղջիկներ են և 9-ը՝ տղաներ: Երկրորդ կիսամեակի քննութիւններուն, 11 ուսանողներ ստացան «գերազանց» գնահատական, 5-ը՝ «գերազանց» և «լաւ», իսկ մնացեալ 9 ուսանողները՝ «գերազանց», «լաւ» և «բավարար»:

Ուսումնական երկու կիսամեակներու ընթացքին, ուսանողութեան դասախօսեցան բազմաթիւ այցելուներ, որոնցմէ առաջինը եղաւ Եգիպտոսի և Ափրիկէի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Զինչինեան, որ, իրեն յատուկ խորիմաց ռնով դասախօսեց փրկագործութեան խորհուրդի մասին: Նման դասախօսութեամբ մը ուսանողութիւնը խանդավառեց Լիոնի և Շրջակայից Առաջնորդական Փոխանորդ՝ Նորվան Եպս. Զաքարեան, որ բացատրեց Հայ Եկեղեցւոյ իւրայատկութիւնները: Հոկտեմբերի 2-ին, պերնախօս իր իմաստութեամբ խօսք տուաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսը, որ շեշտեց կարևորութիւնը աստուածաբանական գիտութիւններուն և խրախուսեց ուսանողութիւնը աւելի մեծ խանդով նուիրուելու աստուածգիտութեան: Խանդավառող և ներշնչեալ իրենց խօսքով Ֆակուլտետի ուսանողութեան խօսեցան նաև Շիրակի Թէմի Առաջնորդ Գերշ. Տ. Գրիգորիս Արքեպս. Բունիաթեան, Գանատայի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան, Գերմանիոյ Թէմի Առաջնորդ՝ Գարեգին Եպս. Բեկչեան և մասնագիտական դասախօսութեամբ մը՝ Ուրուկուայի Թէմի Առաջնորդ՝ Յակոբ Եպս. Գրլընեան:

Բանասիրական և Պատմական Ֆակուլտետներէն եկած և Աստուածաբանականի ուսանողութեան միացած մեծ խումբ երիտասարդութեան մը դասախօսեց Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեան, որ նիւթ ընտրած էր Հայաստանի Կառավարութեան դիմաց դրուած հիմնահարցերը:

Ապրիլի 27-ին, նոյնպիսի լայն ուսանողական խումբի մը դասախօսեց Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսը, որ ներկայացուց Հայ Եկեղեցին իր կառոյցով, իր բնոյթով և իր առաքելութեամբ: Գիտական բարձր մակարդակի իր հմայիչ խօսքով, Վեհափառ Հայրապետը ունկնդիր երիտասարդութեան աչքերը սեւեռած պահեց իր ոսկեքերտն շուրթերուն, ժամէ մը աւելի, և անխոնջ կերպով պատասխանեց բազմաթիւ հարցումներու:

Ուսումնական տարուան ընթացքին, ուսանողութիւնը և ուսուցչական կազմը այցելեցին բազմաթիւ վանքեր, այնտեղ լսեցին դասախօսութիւններ տուեալ վանքի մասին, եկեղեցական արարողութիւններու մասին և սկսաւ զարգանալ անոնց հոգիին մէջ Հայ ուխտաւորի զգացումը:

Առաջին գիտարշաւը ուղղուեցաւ դէպի Հառիճայ վանքը: Ֆակուլտետի

խումբին միացաւ Շիրակի Թէմի Առաջնորդ Գերշ. Տ. Գրիգորիս Սրբազանը, իր Սարկաւագներով և Հոգևոր Ճեմարանի խումբ մը դասախօսներով և ուսանողներով: Զագարեաններու կառուցած ամայի Տաճարին մէջ, կատարուեցաւ ժամերգութիւն, բացատրուեցան հայկական նարտարապետութեան գեղեցիկ կոթողին առանձնատկութիւնները: Առաջին շփումն էր այս՝ ուսանողներուն և եին վանքի մը խորհրդաւորութեան հետ:

Երկրորդ գիտարշաւը կազմակերպուեցաւ Նոյեմբերի 20-ին՝ Յակոբայ Մծրնայ Հայրապետին տօնին, Արտաշատի շրջանին մէջ: Ուսանող և դասախօսներկայ եղան Ս. Պատարագին Ս. Յակոբայ եկեղեցիին մէջ, ուր կը գտնուի Սուրբին դամբարանը: Ս. Պատարագէն ետք, խումբը բարձրացաւ Խոր Վիրապի վանքը: Օրը Շարաք էր, շատ հաճելի էր տեսնել այնտեղ հարսնէտներու բազմաթիւ խումբեր, շարքի կեցած, մտնելու համար եկեղեցի, Ս. Պապի խորհուրդը ընդունելու: Վանքի փոքր մատուռին մէջ, ուսանողները տեսան խոր վիրապի մուտքը և իշան վար՝ իրենց աչքերով տեսնելու համար արգելարանը, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ դատապարտուած էր անցնելու տասներեք տարիները, դուրս գալէ առաջ, քրիստոնէացնելու համար Հայոց աշխարհը:

Զմեռային երկու ցրտագին ամիսներուն՝ Յունուար և Փետրուարին, կը փակուին Հայաստանի բոլոր ուսումնարանները: Հետևաբար, գիտարշաւ ուխտագնացութիւնները շարունակուեցան Ապրիլի սկիզբը, Աւագ Շարքուան և Ս. Զատիկի տօներու առիթով: Ծաղկազարդին, առաջին ուխտագնացութիւնը ուղղուեցաւ դէպի Զուարթնոցի Տաճարի աւերակները, Ս. Հռիփսիմէ գեղակերտ Տաճարը և Ս. Շողակաթի եկեղեցին:

Աւագ Հինգշաբթի օր, Ֆակուլտետի խումբը ներկայ եղաւ Ս. Էջմիածինի Մայր Տաճարին մէջ՝ Ոսկուլայի արարողութեան, որուն ընթացքին, Վեհափառ Հայրապետը ոտքերը լուաց նաև Ֆակուլտետի երկու ուսանողներու: Արշաւախումբը այցելեց նաև Հին Վեհարանի շէնքը, ուր ապրած և գործած էին Ամենայն Հայոց Կաթողիկոսները, մինչև երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսը, որուն օրով վերադարձուեցաւ Նոր Վեհարանի շէնքը, նորոգուեցաւ և սկսաւ գործածուիլ իբրև Կաթողիկոսարան: Անոնք այցելեցին նաև եին և նոր թանգարանները, ուր գտան զմայլելի գանձերը եկեղեցական սպասներու և ասեղնագործուած զգեստներու, վարագոյներու, և այլն:

Ապրիլի 28-ին, հաւատով ներշնչուած երիտասարդ ուխտաւորները տարուեցան Գիւմրիի Ս. Աստուածածին եկեղեցին, ներկայ ըլլալու Արկաւագած ձեռնադրութեան, որմէ ետք ուխտի գացին Պաշկաւունեաց տօնի հուշակաւոր Մարմաշէնի վանքը:

Գիտարշաւ ուխտագնացութիւններու զագաթնակէտը եղաւ ուղևորութիւնը դէպի Տաթև: Յուլիսի 29-ին, ուսանողութիւնը, դասախօսները և Ֆակուլտետի աշխատողները ուղղուեցան դէպի նշեցնաձոր և կանգ առին Նորավանք: Զիրենք ընդունեց և առաջնորդեց Սիւնեաց Թէմի Առաջնորդ Արաքսի Մայրապետը Վարդապետը, որը ներկայացրեց նաև եկեղեցիին պատմութիւնը: Խումբը մտաւ ապա Օրբելեան իշխաններու դամբարանը, ուր, ինքնամփոփ, աղօթեցին Հայ հաւատքի և հայրենիքի պաշտան իշխաններու յիշատակին: Այնուհետև, ուխտաւոր խումբը առաջնորդուեցաւ դէպի նամբարը, ուր Սիւնեաց Թէմի Առաջնորդը յաջողած է ստեղծել պատշան յարմարութիւններ ընդունելու 350

զոհուած մարտիկներու երեխաներ: Շատ յուզիչ էր Ֆակուլտետի ուսանողութեան և որբացած մանուկներու հանդիպումի պահը: Իւրաքանչիւր մանուկի ետին, շուքի նման կերէէին մեր օրերու հերոսներ, որոնք նման Օրբելեաններուն, պաշտպանած էին Հայոց լեռները և զոհուած անոնց ազատագրութեան համար: Երկու ժամերը անցան շատ արագ. մանուկները հրգեցին, պարեցին, արտասանեցին և այցելուներուն սիրտերը կապեցին իրենց հարազատի խորունկ սիրով:

Թաքորդ առաւօտ, խումբը ուղղուեցաւ դէպի վեր, աւելի վեր, դէպի Տաթևի վանք: Ժամէ մը աւելի բարձրանալէ ետք երևցան գմբէթները լեռան գագաթին: Ուխտաւորները կազմեցին թափօր և Շահէ Սրբազանի, Աշոտ Արեղայի և Գևորգ Սարկաւագի առաջնորդութեամբ ֆալեցին դէպի վանք, հրգելով «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»: Նորոգուած Տանարին մէջ, բոլորը զգացին թէ իրապէս կը գտնուին Աստուծոյ բարձունքին և, այդ զգացումով հրգեցին «Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար, առ իս լոյս ծագեալ»:

Պաշտամունքէն ետք, Գևորգ Սարկաւագը, կեցած Գրիգոր Տաթևացիի դամբարանին մօտ, ըրաւ պատմականը վանքին: Ապա, խումբը այցելեց վանքին գանազան մասերը, խմբուելէ առաջ Մետրապոլիտ Ստեփաննոս Օրբելեանի կառուցած մատուռին մէջ: Այնտեղ, Ֆակուլտետի դաստիարակ Մարի Սանթուրջեան ներկայացուց Գրիգոր Տաթևացիի կեանքն ու գործը: Այսպէս կատարուեցաւ ուխտագնացութիւն մը, որուն ապրումներով հարստացած երիտասարդները աւարտեցին առաջին տարուան իրենց դասընթացները:

Ուսումնական տարուան իրագործումներէն ամենէն նշանակալիւն եղաւ Ֆակուլտետի գրադարանը: Համայնավար կարգերը արգիլած էին որ կրօնական ունէ թովանդակութեամբ գրականութիւն մտնէ ունէ կրթական հարկէ ներս: Նոյնիսկ Համալսարանի մեծ գրադարանին մէջ ամբարուստ գիրքերուն մէջ պահուած հազուագիւտ գիրքերը, արգելքի տակ մնացած էին և անտրամադրելի էին ընթերցողներուն:

Երբ Պետութեան կողմէ վաւերացուեցաւ Շահէ Սրբազանի առաջարկը Աստուածարանութեան Ֆակուլտետ հիմնելու, ան դիմեց տակաւին Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին և Գալուստ Կիւլաճեանին Հիմնարկութեան՝ ուղարկելու համալսարանին կրօն-եկեղեցական գրականութիւն: Վեհափառը անմիջապէս ընդառաջեց և ուղարկեց էարիւրէ աւելի եռտորներ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի հրատարակութիւններէն: Նոյնպէս, Գ. Կիւլաճեանին Հիմնարկութեան Հայկական քաժնի Տնօրէն՝ Պր. Զաւէն Եկուեան ուղարկեց «Կնիք Հաւատոյ» վերահրատարակուած եռտորէն երեք օրինակներ:

Մինչ այդ, Համալսարանի երկ շէնքին մէջ գտնուող ֆիզիկայի փօրձարանը, հիմնապէս վերանորոգուած, կահաւորուեցաւ իբրեւ Ֆակուլտետի գրադարան: Շահէ Սրբազան բերել տուաւ Զիթենեաց Լեռան Հայ Աստուածաշունչի Կեդրոնի իր գրադարանին մեծ մասը (հազար եռտորներէ աւելի) և կազմուեցաւ նոր գրադարանը, օժտուած համակարգչներով և ընթերցասրահով: Սրբազանը, մինչ այդ, դիմած էր նաև Անկլիքան Եկեղեցիին, որ մօտ 740 հառոր Անգլիքան երէն և նոր հրատարակութիւններ նուիրեցին Ֆակուլտետին: Գիրքերու ընթերցութիւնը կատարեց Բրիտանական Գրադարանի Արևելեան քաժնի տնօրէն Արժանապատիւ Տօթօր Ներսէս Ա. Քահանայ Ներսեսեանը: Սրբազանը նման դիմում մը կատարած էր Ռուս Ուղղափառ Եկեղեցիին, որը ուղարկած է ուսեթէն գիրքերու

ցուցակ մը: Ընտրուած մօտ 200 հատորներ պիտի ստացուին մօտ օրերս: Ընդառաջելով Շահէ Արքագանի խնդրանքին, Ամերիկայի Արևելեան թեմի Առաջնորդարանը նուիրեց 6 օրինակ Նորայր Արք. Պողոթանի «Միսագիտութիւն» հատորէն: Նուէր ստացուեցան նաև բազմաթիւ գիրքեր կրօնական այլ կազմակերպութիւններէ, Հայ Աւետարանական եկեղեցիէն, Հոգևոր եղբայրակցութենէն, Վեր. Ս. Սահակեանի գլխաւորած «Ֆրանսայի Բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխութիւն» կազմակերպութենէն և այլ անհատներէ:

Ֆակուլտետի Դիտ-Խորհուրդը, Յուլիսի 27-ի իր նիստի ընթացքին, որոշեց գրադարանը անուանել իր հիմնադիր բարերարի անունով՝ «Շահէ Արք. Անեմեանի անուն աստուածաբանութեան կարիքետ», կրնա՞տ՝ «Անեմեան գրադարան»:

Յուլիսի 24-ին, Շահէ Արքագանի 70-ամեակն էր: Այդ առթիւ, Համալսարանի ռեկտորատի գիտաժողովը նիստ գումարեց Յուլիսի 25-ին, որու ընթացքին դրուատուեցաւ Արքագանի գիտական և կրթական ծառայութիւնը և յատուկ վկայագիր շնորհուեցաւ Ֆակուլտետի դեկանին:

Ուսումնական տարուայ երկրորդ կիսամեակին, Աստուածաբանութեան Ֆակուլտետի գիտաժողովը մշակեց նոր ծրագիր, Հայ եկեղեցւոյ Պատմութեան միամեայ դասընթաց հաստատել Համալսարանի բոլոր Ֆակուլտետներին համար: Մրացիրը արժանացաւ Վեհափառ Հայրապետի հաւանութեան և ներկայացուեցաւ Համալսարանի մեծ Դիտ-խորհուրդին, որ վաւերացուց զայն և հղեց Բարձրագոյն Ուսման նախարարին: Յատուկ որոշումով ծրագրուեցաւ որ Աստուածաբանութեան Ֆակուլտետի մասնագէտ դասախօսներու յանձնախումբ մը կազմուի և ստանձնէ յատուկ ձեռնարկ պատրաստելու պարտականութիւնը ուսումնական յաջորդ տարուան ընթացքին: Մրագրուած դասախօսութիւնները պիտի սկսին 1997-ի Սեպտեմբերի 1-ին:

Այսպէս սկսաւ և աւարտեցաւ Աստուածաբանութեան Ֆակուլտետի ուսումնական առաջին տարին, որուն գոյութեամբ և գործունէութեամբ, բարձրագոյն ուսումներու աշխարհին մէջ ներգործեց նոր ոգի, կրթական նոր շունչ, աշխատանքային ուրույն ոճ և խնկարոյր մթնոլորտ, որը արժանացաւ բարձր գնահատանքի պետական և համալսարանական բոլոր շրջանակներուն մէջ:

ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐԶԵԱՆ

ԳԱՍԱԽՕՍ